

ՔԱՆՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԵԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կես տարվան 6 րուբլ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».

Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տ է լ է Ք օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են խրաքանչիւր բառին 2 կոպէկ.

Տ է լ է Ք օ ն № 253.

Հ Ի Մ Ե Ա Պ Ի Բ Գ Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Որպիտանքի արժանի է.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Իգորից. Նամակ Գանձակի գաւառից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ֆրանսիայից. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱՊՈՒՆՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ներսիսեան դպրոց.

ԻՐԱՌՈՒՍԱՆՔԻ ԱՐԺԱՆԻ Է

«Մշակի» մէջ ապաված թղթակցութիւններից և յօդուածներից մեր ընթերցողները գիտեն, որ Պարսից կառավարութիւնը համակրութեամբ է վերաբերվում զէպի այն բոլոր փորձերը, որոնք նպատակ ունեն եւրօպական կրթութիւն և մտայնութիւնը մէջ և խրատուած է իր հպատակ հայ ժողովրդի ջանքերը կրթական ասպարէզում:

Պարսկաստանի հայերի համար, որոնք վերջին տարիները լուրջ կերպով սկսել են զբաղվել դպրոցներ բանալու հարցով, շատ նպաստաւոր է տիրող իշխանութեան բարի տրամադրութիւնը: Արթիական գործը կարելի է կանոնաւոր և հաստատ կազմակերպութեան միջոցով ապահովել այնպէս, որ նա տեղիք չը տայ էական թիրախացութիւնների և մանի հայ ազգաբնակիչների կեանքի մէջ, իբրև նրա հիմնական պահանջներից մէկը, զարնայով կամայականաց պարտադիր և ընդհանուր ամեն մի համայնքի համար:

Հարեանութեան և փոխադարձ շահերի շնորհով Պարսկաստանը տաճում է բարեկամական զգացմունքներ զէպի Ռուսաստանը: Երկու երկրի մէջ սկսվում են սերտ յարաբերութիւններ թէ անտեսական և թէ բարաբանական հարցերում: Մասնաւորապէս Պարսկաստանի հայերը միշտ եղել են անդադար յարաբերութիւնների մէջ Կովկասի ազգաբնակիչների հետ և այնտեղի հայ առեւտրականները կապեր են հաստատել ոչ միայն կովկասեան, այլ և Ռուսաստանի ներքին խոշոր կենտրոնների և վաճառատնոցների հետ:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՆԵՐՄԱՍԵԱՆ ԴՊՐՈՑ

I
1801 թւականին, երբ առաջ տիրապետութիւնը վերջնականապէս հաստատվեց Թիֆլիսում, առաջ գործի հրամանատար զինակալ Լաւրիկ տեղեկութիւններ պահանջեց Գրիգոր վարդապետից հայոց եկեղեցական և դպրոցական գործերի մասին: Գրիգոր վարդապետի տուած պատասխանից երեւում է, որ վրաստանի տիրապետութեան սահմաններում հայերը ունին երեք թեմ—Էջմիածնի, Հաղբատի և Սանահինի: Ամբողջ այդ տարածութեան վրա գոյութիւն ունին միայն երկու հաս հայ դպրոցներ. մէկը Էջմիածնի թեմում, իսկ միւրը—Թիֆլիսում, Մոզու եկեղեցու մօտ: Երեկաները այդտեղ սովորում են հայոց և վրաց լեզուները և իրանց գիտութիւնը աւարտում են քերականութեամբ...

Մասնաւոր ամպլոթեան աւելի տխուր և յուսահատական պատկեր հազիւ թէ կարելի լինի երեւակայել: Երկու դպրոց ամբողջ վրաստանում... Բայց չը պէտք է շնանալ դպրոց բառից: Մեզանից 20—30 տարի առաջ դպրոց էր կոչվում ամեն մի խուց, ուր մի քանի երեկաններ հաւաքված գրագիտութիւն էին սովորում առ ոտք որ և է տիրացուի, տէրատէրի, կոյսի: Առ ոտք—ա մի շատ բնորոշ խօսք է, որ մնացել է մեր ինչ գրականութիւնից և միանգամայն ճիշդ կերպով պատկեր

Հասկանալի է և ընտան է, թէ ինչու պարսկահայերը իրանց դպրոցական կազմակերպութեան ծրագիրը աշխատել են այնպէս մշակել, որ նրանք կարողանան աւելի և աւելի զարգանալ և ամբարտնալ իրանց յարաբերութիւնները Ռուսաստանի հետ և միջոց ունենալ կատարելագործվելու Ռուսաստանի կրթական կենտրոններում: Այն նոր, աւելի սերտ, յարաբերութիւնների մէջ, որ հաստատվում է երկու պետութիւնների կեանքում, օգտաւէտ և ցանկալի դեր կարող են կատարել բոլոր այն ոյժերը, որոնք կը պատրաստվեն կուլտուրական գործիչներ լինել երկրի համար:

Սակայն պէտք է խոստովանել, որ դպրոցական գործի համար պարսկահայերի ունեցած գրամական միջոցները շատ սահմանափակ են: Չնայն գումարներով անկարելի է ունենալ լաւ պատրաստված ուսուցիչներ, դպրոցական ընդարձակ շէքեր, դասական անհրաժեշտ գրքեր և առարկաներ: Այետեղ կարեւոր է օգնութիւն և աջակցութիւն բոլոր այն անձերի կողմից, որոնք համար թանգ է դպրոցական գործի աջող կազմակերպութիւնը և յարատև գոյութիւնը: Նոյն իսկ Պարսիցի նման մի խոշոր և համեմատաբար աւելի ապահովված կենտրոնում չէ ժողովում այնքան գումար, որ ապահովի դպրոցների տարեկան ծախքերը: Իսկ այդ դպրոցները մի տեսակ կենտրոնական դպրոցներ են, որոնք պէտք է օրինակ ծառային միւսներին համար: Այդ դպրոցների շուրջ ժողովված են եղած մասուր ոյժերը, որոնք սպասում են թէ այսօր էլուց օգնութեան կը հասնեն խոշոր նուիրատուութիւններ և թող կը տան կրթական գործի զարգացումը առաջ տանելու հաստատ քայլերով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԻԳՈՐԻՑ

Մայիսի 14-ին

Մայիս ամիսը սկսվեց ամենօրեայ յորդառատ անձրեաներով, իսկ երէկ անձրեւը փոխվեց

բացում է սովորողի և սովորեցնողի դիրքը: Աշակերտը կուշ եկած ուսուցչի ոտների մօտ, երբեք կուշ ամբար քեղ—ուկորը ինձ մանկավարժական միակ հասկանալի մեթոդին Ռուսումը տանջանք էր, շատ քչերն էին յօժարութեամբ իրանց անձը մասնում այդ տանջանքին և տանջանք ինչի համար: Մի կտոր սարմուռ, մի կտոր ժամագիրք և ամենայնուրեւ նաեւ մի կտոր քերականութիւն—անա ինչ էր ձեռք բերվում վարժապետին տարիներով ծառայելու և դպրոցական ինկվիզիցիային ենթարկվելու միջոցով: Այսպէս էր, անշուշտ, և Մոզու դպրոցը, որին հայ հոգեւորականներ կայացրել էր առաւելագործութեան իբրև հայկական կրթութեան և լուսաւորութեան կենտրոն:

Պէտք է, ի հարկէ, աւելացնել, որ միայն հայերը չէին այսքան ողորմելի դրութեան մէջ գտնվում. պակաս ողբալի չէր կրթական գործի դրութիւնը և վրացիների մէջ. Ռուս կառավարութեան առաջին քայլերից մէկն էր հիմնել մի դպրոց Թիֆլիսում, բայց բացառապէս վրացի ազնուականների և հոգեւորականների համար, որովհետեւ, ինչպէս գրում էր իշխան Յիջիանով, ազնուականութիւնը ծայրայեղ տիրատուութեան էր մասնավոր և շատերը նոյն իսկ իրանց մայրենի լեզուն չէին իմանում կանոնաւոր կերպով:

II

Պատական նշանաւոր րօպէներում, երբ վճռվում է ազգերի բազմը, միայն այն ազգերն են կարողանում կենտոնակութեան հիւթեր ձեռք բերել և վերածնութեան ճանապարհը ճանաչել, որոնք հասկանում են րօպէի մեծ նշանակութիւնը, որոնք ըմբռնում են իրերի

կարկուտի Իգորի շրջակայքում կարկուտ տեղաց, որը տեւեց 10 րօպէ. կարկուտը Ֆլասկ է 10—15 գիւղերի ցանքերը և այդինները, հայահատիկները այնպէս են գետին փովել, որ տեսնողը կը կարծէ, թէ հնձված են:

Գարունը բացվելուս բոլոր գիւղացիները ուրախ էին, որովհետեւ ցանքերը առատ պրտուղ էին խոտանում. բայց երէկվայ կարկուտը գիւղացիներին յուսահատութեան մէջ է զցել: Էլ ինչով աղբին, ինչով պարտքը տան: Անցեալ տարվայ պաշարը կերել-վերջացրել են, մի մասը ցանել են և սպասում էին նոր հունձին. պաշարը վերջնապէս պատճառով սկսել են վերադարձնել ցորեն վերցնել գիւղի աղանջից, 1 սօմարին (3 պուլ) վերադր անում են 4 լիար (48 ֆունտ): Ահա տոկոս 1 1/2—3 ամիս ժամանակի համար: Մարդիկ կան, որոնք մինչև անգամ ցանած սերմն էլ վերադրում են վերցրել:

Գիւղերից անհնաշատ Ֆլասկ ստացել են Ջիլֆիլդար կոչված թուրք գիւղը և Թէջրու հայաբնակ գիւղը. նրանք գրկվեցին բոլոր ցանքերից, պողատու ծառերից, խաղողի վազերից, բամբակից, ինչպէս նաեւ բոլոր այն բայերից, որոնք այնքան հարկաւոր են գիւղացուն: Ամեն ինչ միջոցել է, հողին հաւատարմութիւն:

Կարկուտի մեծութիւնը, ինչպէս ասում են, հաւի ձուի չափ է եղել: Մի տեղ կշռել են 6 հատը մի ֆունտ է եկել: Չափերու գիւղում, որի ցանքերի կէս մասը Ֆլասկով է և որի բնակիչները կէս հայ են, կէսը թուրք, ինչպէս պատում են, մի թուրք երեխայ, 7—8 տարեկան, ընկնում է կարկուտի տակ, որի հարուածներից ձաքել է նրա գլուխը և սկսել է արիւն հոսալ:

Գիւղացիները սկսել են կորել անել և ցանել կարկուտից Ֆլասկած տեղերում: Կորելի խաղվար (30 պուլ) գինը 40—50 րուբլու հասաւ: Իսկ ցորենի տէր աղանքը առիթ գրտան գները բարձրացնելու:

Վնասված ցանքերի տէր գիւղացիները այսօր բոլորը թափվել են Իգորի գաւառապետի մօտ, ինչորով գնալ տեսնել իրանց Ֆլասկները: Այդ գիւղացիներին եթէ ուզում են հարցնել Ֆլասկների մասին, չեն կարողանում պատասխանել, որովհետեւ լուսահատութեան ար

անողը պահանջ—կամ յետ մնալ քարանայ, ոչնչանալ իբրև կուլտուրական ազգ, կամ առաջ գնալ, զարգանալ և տեղ բնակ վերամշակութիւնը, ինչնանանալ մարդկութեան մէջ:

Այդպիսի վճռական րօպէ էր XIX դարի սկիզբը Կովկասում, երբ առաջ արծիւր վերջ էր գնում թաթարական ցեղերի տիրապետութեան և հրաւիրում էր իր նոր հպատակներին խաղաղ ու հանգիստ զբաղվել կրթութեան, առաջադիմութեան և բարոյական վերածնութեան նպատակով գործերով: Հայերը հասկացան այդ հրաւերի ամբողջ միտքը: Գանվեցան երկու անհամներ, որոնք գիտէին, որ նոր ժամանակներում ապրելու համար հային հարկաւոր է կրթութիւնը: Այդ անհամները մէկը հայոց սուլթի նշանաւոր բարերար Լազարեան էր, որ 1817-ին հիմնեց Մօսկվայում Լազարեան ձեւարանը, իսկ միւրը—հայկաւոր Ներսէս Աշտարակեցի էր, որի կատարած գերը Կովկասի պատմութեան մէջ այնքան կարեւոր և մեծ է: Այս գործունեայ, հետաւետ և ժողովրդասէր հոգեւորականը շարունակ երազում էր մի բարեկարգ դպրոց հայ երեխաների կրթութեան համար, և երբ նշանակվեց Թիֆլիսի առաջնորդ, իրան յատուկ կրակոտ եռանդով կպալ գործին և սկսեց միմանց ետեւից խորտակել այն խոչըրոտները, որ յարուցանում էր ժամանակակից տգէտ և խաւար հայ հասարակութիւնը:

Ոչ խաչատուր Լազարեանը, ոչ Ներսէս եպիսկոպոսը, ի հարկէ, Ամերիկա չէին գտնում հայերի համար: Վենետիկի Միթիթարեան վանքը ծաղկած էր մի ամբողջ դար և զարծել էր հայերի համար մի նոր Աթէնք, որտեղից լոյս

առաւել լսելու է: Ամեն տեղից յոյր կրաւած գիւղացիները միմիայն կառավարութեան վրա են դրել իրանց յոյսը:

Ե. Լազարեանց

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻ ԳԱՆԱՌՈՒՑ

Ելեննիգորֆ, մայիսի 4-ին

Մի անակ գոհ եւս երէկ, կէսօրից յետոյ, օր ցերեկով Ռոսիանապատ գիւղի Հեռու-Հանդ կոչված տեղը հասարակութեան ցանքերի, խոտաբերների պահպան Լեւոն Դանիէլեանց սպանվեց չորս արեւելաւոր և քաղաքաւայ թօփալահասանդեցիների ձեռքով: Պէտք էր տեսնել թշուառ երիտասարդի դիակը, որպէս զի ճիշդ դադափար կազմէիք, թէ անգթութեան որ աստիճանին է հասնում կատաղած մարդու զազանութիւնը:

Գանձակ քաղաքից տար վերստի վրա և Ելեննիգորֆի քիթի տակը մօտ տարր տարի արանից առաջ կազմակերպվել է մի աւաղակալին որջ, որը կոչվում է Թօփալ-Հասանդու. զաւառի զանազան անկիւններից հաւաքված այդ կասկածելի և աւաղակաւարոյ մարդիկ ահ ու սարսափի մէջ են պահում հարեան ազգաբնակչութիւնը—գերմանացիներին, թուրքերին և հայերին: Թօփալ-Հասանդուն մի կատարելալ չարք, մի Աստուծու պատիժ է հարեւանների համար. կարծես այդ խանիճաղանձ հաւաքածուն իր անհանգիստ վարք ու բարքով իր կեանքի նշանաբան է ընտրել գողութիւն և սպանութիւն, ուրիշ աշխատանքի անընդունակ է նա: Ժողովրդական կարծիքը դրանց է վերագրում գանձակեցի ծերունի Ներսէս Տէր-Ներսէսեանի մասը, որը չարաչար սպանված էր Ելեննիգորֆից զէպի Գանձակ տանող խնուղու վրա: Թօփալ-Հասանդուցի մէկը անցեալ տարի Ելեննիգորֆ գաղութում փորձ արեց անտառապետի օգնական Մեչիզինի կեանքի զէմ՝ արծանակ արձակելով վերջինիս վրա, երբ նա ուզում էր պետական անտառից գողացված փայտը բռնել: Մի ուրիշ Թօփալ-Հասանդուցի անցեալ տարի նոյն պայմանների մէջ փորձ արեց սպանել անտառի կօնտրուտոր Դալիլօղլին: Առաջին յանցաւորը տասնամեայ բանտարկութեան դատապարտվեց, իսկ երկրորդ գործը դեռ չէ

ստանալը ամեն մի ուսումնասէր հայի տեսնանքն էր: Այդ լուսաւոր կենտրոնն էր, որ բարի և ազնիւ Նախանձ ծնեցրեց երկու հիմնադրների մէջ: Մրցել Միթիթարեանների զէմ—անա այն միտքը, որ առաջին անգամ ամենից կարեւորն էր համարվում: Պատճառը կրօնական հանգամանք ունէր: Հայ լուսաւորչականները տեսնում էին, թէ որքան ուժեղ են կաթօլիկ Միթիթարեանները, զինված լինելով անհամեմատ բարձր և բազմակողմանի գիտնականութեամբ: Չափանների ահապին հեղինակութիւնը ճնշում էր տգէտ և անպատաստ հայերին, և ինչպես Լազարեան իր հրատարակած շրջաբերականի մէջ գանգաւորում էր, որ մինչդեռ Միթիթարեանները հարուստ ծուռ են հայոց եկեղեցին, ճատարակելով նրան հերձուածող, հայերն, Նորհիւ իրանց աւրգիտութեան, չեն կարողանում պատասխանել կաթօլիկ հայերին և ստիպված են կուլ տալ նրանց բոլոր մտքերը: Ներսէսն էլ իր զարոցական գործունէութեան մէջ օրինակ է ունեցել մեծ Միթիթարին:

Այսքանը, ի հարկէ, չէ նուստատցնում այդ երկու բարերարների մեծ երախտիքը: Կարեւորը սկզբնապատճառը չէ, այլ գործը: Ինչից էլ զրգված լինէր Ներսէսը, մեզ համար ամենանշանաւոր հանգամանքն այն է, որ նա 1824 թւին Թիֆլիսում բաց արեց անդրկովկասեան հայերի անդամակի կանօնաւոր դպրոցը, որ նրա անունով կոչվեց Ներսիսեան դպրոց:

III

Վաղը, մայիսի 21-ին, այդ կրթական հաստատութեան 75 ամեայ գոյութեան յօրինանքն է ստնվում:

քննվել, անցնել տարի Մրուտ գիւղացի երկու եղբայրներ Սողոմոն և Գրիգոր Աղաջանեաններին մի երկուսը սպանեցին թոփախասանալուցիները և այլն և այլն...

Այս անգամ նրանք աւելի վատթար են վարվել իրանց զոհի հետ, քան արեւմտաբլու վաղաբլու խեղճաման անելով չեն բաւականացել, այլ սրբախոյզուղ են արել նրա կողմը և կուրծքը Բայց ինչ է եղել Լեւոնի յանցանքը: Այն որ շարունակ զգուշացնելու է եղել հովիւներին հասարակութեան ցանքերից հեռու մնալու, այն ցանքերից, որոնց վրա դրած է գիւղացիների յոյսը, որոնց գիւղացին մշակել է և պարտքով-պատուհասով ցանկը:

Դէպքից քանի որ առաջ Լեւոնը վերցնում է գիւղի երիտասարդներին, որ գնան միասին ցանքերը նային Արտերի եւ խոտարքների մէջ նրանք գտնուած են թոփախ-հասանելու ոչ խարի հօտերը իրանց հովիւներով, որոնք փախչում են ձօտիկ բլրակի վրա կանգնում և այնտեղից սպանալիքներ կարողութեամբ «արուղի» Լեւոնի դէմ, որը այդ ժամանակուց մորթում է նրանց մի գտնող (այդ մի ընդունված սովորութիւն է): Հովիւներից ամենակատաղին ասում է, որ ինքն էլ պիտի Լեւոնին այդպէս մորթէ, որ սիրտը հովանայ: Ամսին երեքին նրանք, այդ հովիւները, բըռնում են Լեւոնին, նախ գոտիով խեղճում, յետոյ կողորդը և կուրծքը կտրուում, այդ տեսնում է հետուից Լեւոնի ընկերը, բայց փոխանակ օգնութեան պալու փախչում է դէպի գիւղը իմաց տալու, սակայն ճանապարհին պատահում է ձիարածներին, և նրանց հետ գալիս եղեանագործութեան տեղը: Նրանք երկար որոնելուց յետոյ, գտնում են ձորի մայրանների թաւուտի մէջ դիտելը Միւս օրը առաւօտեան սպանութեան տեղն եկաւ մեր մասի նոր պրիստաւ պ. Մակրօպուլ, որը իսկոյն և եթէ կայանաւորեց եղեանագործ հովիւներին և նրանց պարագլուխ Ամիր-Ղուլի օղու աջ թեւքի վրա արեան հետքեր գտնելով հագուստը վրայից հանել տուէր, իբրև նիւթական ապացոյց կատարած եղեանագործութեան: Յանցաւորը ասաց, թէ ոչխարի արիւն է, յետոյ ուղղեց սխալը, թէ ինքը ուրիշների հետ շախմատ վախճելով ժամանակ զլուրը կտրել է, այդ արեանից է, որ թեւքի ձայրերը թաթախվել են:

Այս անուշամանքից արդէն կարող էք հետեւեցնել թէ որչափ փորձվել են արանք գատատանական գործերում, որ յանցանք իրանցից հեռացնելու համար յարգելի պատճառներ են գտնուած: Գիտեն որ վերջը սուտը բաց կը լինի, ոչխարի արիւնը արագու արիւնից որ աստանակալ հնարագործութեան մէջ և դատատանական գործերի վերաբերեալ թոփախ-հասանելուցին փաստարան է: Չորս յանցաւոր հովիւներն էլ բանտ տարվեցան, գործը շուտով կը յանձնվի արդարադատութեանը, յուսանք, որ գէթ այս անգամ եղեանագործները իրանց արժանի պատիժը կը ստանան:

Մենք զարոցի պատմութիւնը չենք գրում այստեղ: Լրագրական մի յօդուածի մէջ ոչ միայն անհարկն է գտնէ հարեւանքօրէն յիշատակել 75 ամալ կենտրոն գլխաւոր հանգամանքները, այլ և չէ կարելի մի առ մի թելել այն օգուտները, որ ստացել է հայ ազգը իր արժանաւոր հոգեւորականի ձեռքով հաստատված և ամուր գիրքի վրա դրած հիմնարկութիւնից:

Եւ ընթերցողը կարիք էլ չունի մեր այս յօդուածի մէջ որոնել այդքան երկար կենտրոն պատկերը: Ներսիսեան զարոցը իր յօդուածին օրը հանդէս է գալիս իր «պատմութեամբ» կայ լրակատար պատմութիւն, որ սկսված է միայն, կայ և համառօտը, որ հասցրած է մինչև մեր օրերը *): Մեզ կը մնայ այստեղ յիշել մի քանի հանգամանքներ, որոնք յոյց են տալիս թէ Ներսիսեան զարոցը ինչ դեր է կատարել արեւելեան հայերի կրթական գործի մէջ:

Այդ դերը շատ մեծ էր և համարեա եզակի մինչև վաթսուական թւականների սկիզբը: Մինչև այդ Անդրկովկասեան հայ թեմերից ոչ մէկին էլ չունէր կանօնաւոր թեմական զարոցներ: Կանօնաւոր ենք ասում այն պատճառով, որ մինչև Ներսիսեան զարոցը ունէր ապահովութեան աղբիւրներ և կառավարվում էր ժողովրդական ներկայացուցիչների ձեռքով, միւս թեմական զարոցները անուանական գոյութեան ունէին և ամբողջապէս հոգեւորականների իրաւասութեան տակ էին գտնվում: Միայն 60-ական թւականների սկզբներին թեմ-

Մի փաստ, որը չէ կարելի լուռից անցնել, որը բոլորի վրա վատ տպաւորութիւն թողեց, այդ այն էր, որ թշուառ երիտասարդի գիտելու եկեղեցի չէ տարվել: Կարծես թէ սա միասնաց տէլեֆօնի գիծը, որ անցնում է հիւրանոցի մօտով: Արդէն սկսել են տէլեֆօնի գիծը վերականգնել:

Նիկ. Գրիգորեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հինգշաբթի, մայիսի 18-ին, նորին մեծութիւն պարսից Շահի Ռիֆիլիսի միկնելու օրը, առաւօտեան ժամը 6-ին կառավարչապետի պալատում հաւաքվեցին բարձրաստիճան անձինքը, զանազան հիմնարկութիւնների կառավարիչները և դասակարգերի ներկայացուցիչները՝ հրաժեշտի ողջոյն տալու նորին մեծութեանը: Այդ միջոցին Գօրօլիսի պրոսպիկտի վրա, Բարեւատիակայ և Երմօլիակայ փողոցներում, մինչև Նիկոլայիսի կամուրջը, կանգնած էին զորքեր զինուորական երաժշտական խմբերով: Թիֆլիսի կազմակերպչական մասնաճիւղի աշակերտները իրանց վերատեսչի հետ միասին շարված էին կառավարչապետի օգնականի ընտանիքի առաջ Բարեւատիակայ փողոցում: Չը նայելով վաղ առաւօտին ժողովրդի խուռն բազմութիւնը երկը էր այն փողոցները, որոնցով պէտք է անցնէր Շահը: Առաւօտեան 7 ժամին և 10 րոպէին նորին մեծութիւնը, գեներալ-ադւաթանտ Արսենիսի, կառավարչապետի օգնական գեներալ-լէյտենանտ Ֆրեդէի, մեծ վիզիր Սադրազամի, իր միւս մինիստրների և շքախմբի հետ միասին՝ դուրս եկաւ պալատից և կառք նստելի: Այդ ժամանակ Արսենիսի սարկի լայն թիղանօթաձգութեան որոտումն: Նորին մեծութեան հետ մի և նոյն կառքում նստած էին գեներալ Արսենիսի, Սադրազամը և պարսից արքունի պալատի մինիստրը: Հասնելով կայարան նորին մեծութիւնը մտաւ արքայական սենակինը, իսկ այնտեղից, մի քանի րոպէից յետոյ, անցաւ արտակարգ գնացքի կայսերական վագօնը: Մի րոպէ կերպով հրաժեշտ տալով բոլոր այն անձանց, որոնք եկել էին ճանապարհ գցելու նորին մեծութեանը՝ Շահը միկնեց քաղաքից դէպի Սյուխէթ: Շահի հետ միասին Սյուխէթ գնացին նաև կառավարչապետի օգնական Ֆրեդէ և նախնադատ Սվիչին: Սյուխէթում կառք նստելով՝ Շահը իր շքախմբի հետ միասին ուղևորվեց Վաղիկավազ:

Երէկ Միլիթանանի տանը, որտեղ գտնվում է «Օրիանտ» հիւրանոցը, հրդեհ ծագեց: Այրվում էր տանիքը: Բարեւադաբար հրդեհաչէջ զօրքերը շուտ վրա հասան և հանգրդին կրակը Բացի վերին յարկի առաստաղից և տանիքից՝ տան միւս մասերը ոչ մի վնաս չէր կրեցին: Հրդեհը ծագել է երեքտրական լուսաւորման զարոցների կառավարութեան մէջ մտրոյից ժողովրդական տարր: որ և կենդանութեան ընդհատելու իր հետ:

Հիմնված լինելով Ռիֆիլիսում, Կովկասի այս կենտրոնում, ուր աւելի քան մի ուրիշ որ և է տեղ շատ կային կրթված, ինտելիգենտ հայեր, Ներսիսեան զարոցը բոլոր հայ զարոցներից առաջ էր գտնուած նաև կրթական սիստեմի և ուղղութեան վերաբերեալ գործերի մէջ: Ներսիսեանի հիմնած զարոցը իր գոյութեան առաջին տարիներում հին խալիֆայական զարոցից մի աստիճան էր բարձր: Նա տալիս էր շատ քիչ պատրաստութիւն, շատ սահմանափակ ուսում: Ուսանողը Արդիան, այդ զարոցի առաջին ասնիքից մէջ, բոլորովին գոհ չէր իր ստացածով և պատրաստվում էր վերստի գնալ կառավարչագործվելու համար: Դժգոհ էր և Արդիանի ընկերակից Ստեփանոս Նազարեանը: Բայց այդ անբարար գրութիւնը մի դրդիչ էր ապագայ բարեկարգութեան համար: Դժգոհները—Արդիան, Նազարեան գնում են Դորպատ, ծանօթանում են եւրօպական կրթութեան սիստեմի հետ և այնուհետեւ դառնում են հայերի մէջ առաջին կրակոտ քարոյչներ, որոնք ցատիկ կախ են սկսում եղած գրութեան դէմ, ժողովրդականացնում են կրթութեան եւրօպական եղանակը: Սա արդէն մի աստիճան ծառայութիւն է: Յիսնակեան և վաթսուական թւականների շարժումը, որի նշանաբանն էր ժողովրդական կրթութիւն, հիմնված եւրօպական գիտութեան վրա, ամենագլխաւոր ներկայացուցիչ ունէր Ներսիսեան զարոցում աշակերտած Նազարեանին: Դա զարոցի առաջ բերած դժգոհ տարրն էր, իսկ նրանց պաշտպանները մեծ մասամբ նոյն

բութեան թիկերից: Թէ տունը և թէ հիւրանոցը ապահովեցրած էին: Հիւրանոցի մարդկանց վնաս չը պատահեց: Հրդեհը հանգրդնեց ինչ մէկը վերաորվեց: Հրդեհի պատճառով միասնաց տէլեֆօնի գիծը, որ անցնում է հիւրանոցի մօտով: Արդէն սկսել են տէլեֆօնի գիծը վերականգնել:

Ապշերօնեան թերակղզին ջրանցքով կտրուու հարցը պաշտօնական ընթացք է ստացել: Ճիւնանների մինիստրութիւնը ներկայումս ուսումնասիրում է այդ հարցը: Այժմ բոլոր նաւերը, որոնք Բագուից դուրս են գալիս դէպի Աստրախան և Պետրօվսկ գնալու, պտտում են Ապշերօնեան թերակղզու շուրջը, կատարելով 130 վերսո ճանապարհորդութիւն, մինչև որ կը հասնեն Բագուի միջօրէի գծին: Իսկ երբ Բագուից ջրանցք փորվի ուղիղ գծով, այն ժամանակ ճանապարհը կը կարճանայ 100 վերսոով և կը դառնայ ձօտ 22 վերսո: Զրանցքը կունենայ ամենաքիչը 14 սաժէն լայնութիւն և 15 ոտնաչափ խորութիւն: Զրանցքի շինութիւնը կարժեանայ ձօտաւորապէս 17 միլիօն րուբլի:

Որոշելու համար թէ օտարազգիները որքան գործարաններ և ձեռնարկութիւններ են հիմնել Ռուսաստանում, թէ որքան օտարազգի մասնագէտներ, վարպետներ և բանւորներ կան արեւմտասոցներում, նշանակվում է յատուկ յանձնաժողով, որը պէտք է գործէ ֆինանսների մինիստրութեան մշակած ծրագրով:

Ամերիկացիները դիմել էին Լեւ Տօլստօյին, որ նա հեռագրով յայտնէ իր համակրութիւնը բօլշեւիկ յայտարարու համար այն օրը, երբ բօլշեւիկ ներկայացուցիչները պէտք է հասնէին Նիւ-Եորկ Տօլստօյ պատասխանեց հետեւեալը: «Americans good offices can consist only in menaces of war. Therefore sorry non to be able to comply with your wishes», որ նշանակում է: «Ամերիկացիների բարի ծառայութիւնները կարող են լինել պատերազմական սպանալիքները: Այդ պատճառով ցաւում եմ, որ անկարող եմ միանալ ձեր ցանկութիւններին»:

Երկրագործութեան մինիստրութիւնը որոշել է լրացնել կենդանաւորութեան ուսումնասիրութիւնը Ռուսաստանում: Առանձին դիւանական արշաւանքների միջոցով ուսումնասիրված են կովկասեան թերակղզու և ոչխարապահութիւնը: Այժմ հերթը հասել է խոզապահութեան ուսումնասիրութեանը: Պրօֆէսոր Կարուզին այդ առիթով մշակել է ուսումնասիրութեան մի ծրագիր:

Զարոցի ուսուցիչներն էին, որոնք և կատարի կախ և մղում ազատամարտ երիտասարդութեան դէմ: Յաղթանակը, ի հարկէ, երիտասարդութեան կողմը պիտի մնար: Եւ Պետրոս Շահչեան զարոցի մէջ մտնում է նոր ժամանակի պահանջները, բայց միայն այն շափով, ինչ չափ կարող էր ունենալ նա իր աւելի ազատամարտ-կրօնական, քան աշխարհական ուղղութեանը: Նրա ժամանակ վերջացաւ զարոցի հին դարը և սկսվեց միջին դարը: Իսկ նոր դարը սկսվում է արդէն եօթանասական թւականներից, երբ մեր մէջ երևան են գալիս ժամակարգիչներ և զարոցը ստանում է ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան ուղղութիւն:

Այսպիսով ահա Ներսիսեան զարոցը սերտ կերպով կապված է այն մտաւոր շարժման հետ, որ առաւանջների կենտրոն մէջ ամենալուսաւոր չրջանն է կազմում: Ներսիսի զարոցը բոլոր միւս հայ զարոցների առաջնորդն ու ղեկավարն է դառնում: Նա է, որ բաց է թողնում աւելի պատրաստված աշակերտներ, նա է, որ առաջին անգամ ուսուցչանոցի դեր էլ է կատարում, պատրաստելով այն ուսուցիչների մեծ մասը, որոնք գործում էին մեր գաւառներում: Աւելացնեք և այն, որ Ներսիսեան զարոցը մինչև 1860 թւական պահում էր սուպերական մասնաւոր, որ եթէ վերջը չէ կովկասեան հայերի մէջ, գոնէ ամենից շատ գործունեան է, ամենից շատ արգասաւորը:

Պատմութիւնը վերին աստիճանի իրատական դասեր է տալիս: Յովհաննէս Կարբեցի կաթողիկոսի ժամանակ զարոցը դառնում է հակաժողովրդական կրթութեան թեմական սեփականութիւն և անց է կացնում: մուսլու ման-

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՅՐԱՆՍԻՍՏՈՅ

Պարիզ, մայիսի 16-ին
Յուցանաղէսը կամաց-կամաց մօտենում է իր կատարելութեանը: համարեա օր չէ անցնում, որ այս կամ այն օտարազգի պալիթօնի լայնամաս հանդէսը տեղի չունենայ: Վերջին օրերս հետզհետէ բացվեցին՝ առաւակ, ունգարական, Դանեմարքայի, Իտալիայի, Շվեդիայի, Ռեյլիայի բաժինները, աւելի կամ պակաս փառաւոր հանգէաներով, երբեմն նոյն իսկ հանրապետութեան նախագահի ներկայութեամբ: Էլի մի քանի օր և բոլոր մնացած բաժինները կը բացվին հասարակութեան առաջ, վերջին բանւորը կը հեռանայ ցուցանաղէսի շրջափա- կից, տանելով իր հետ ստեղծագործող գործիքները և իր ստեղծելի փոշու հետ միասին աշխարհին ի տե՛ս թողնելով իր դառն քրտինքի պտուղները:

Այժմից իսկ կարելի է ասել, որ ներկայ ցուցանաղէսը թէ իր ընդարձակութեամբ և թէ իր բազմազան ձոխութեամբ գերաբացնում է բոլոր նախկիններից. ամբողջ ծրագիրը խելացի կերպով մտածված և ամենայն մասնաւորամասութեամբ ի կատար է ածված: Նախ քան առանձին մասերի, աշխարհի առանձին կողմերը ներկայացնող վերին աստիճանի հետաքրքիր բաժինների նկարագրերը, կը փորձեմ այսօր մի ընդարձակ ակնարկ գցել ցուցանաղէսի ամբողջ պատկերի վրա, որով գոցէ կարելի լինի մօտաւոր գաղափար կազմել գործի և աշխատանքի մեծութեան մասին:

Յուցանաղէսը տարածվում է Սենա գետի աջ ու ձախ ափերում, բնուած է Մարսեան և Ելիսեան ընդարձակ դաշտերը, Ինվալիդի առաջ ձգվող հրապարակները, Տրօկադերօի շուրջը գտնվող սարածութիւնը և Անտէնի ուղիւն Ընդհանուր մակերեւոյթը մի միլիօն ութսուն հազար քառակուսի մետր է, որից հինգ հարիւր քառասուն հազար մետրը ծածկված է շինութիւններով, որոնցից մի քանիսը, ինչպէս գեղարուեստի երկու պալատները (Les palais des beaux arts) ճարտարապետութեան հրաշալիքներ են և շինված են մտապէս մնալու համար:

Շինութիւններն անվերջ շարքերով չեն յարարում իրար, այլ կազմում են մի քանի իրարից անջատ գրուպներ, այնպէս խելացի մտածված ձեւով դասաւորված, որ իւրաքանչիւր գրուպան իր ամբողջութիւնը կազմող բաժիններով իր առանձին բնաւորութիւնը, նշանակութիւնը, իր առանձին խորհուրդն ունի, նախկինով գրաւած տեղին և իր պարունակութեանը: Այսպէս Սենայի աջ ափին բարձրացած Ելիսեան պալատները իրանց յարակից շինութիւններով մի դատ ամբողջութիւն են կազմում: Սենայի ձախ ափին, Ինվալիդի հրապարակի վրա ձգված Ֆրանսիական մասնագիտութեան շինութիւնները նոյնպէս մի առանձին բաժին են ներկայացնում: Ազգերի փողոցի աջ կարգ, ողորմելի մի շրջան: Բայց ճէնց որ Ներսէսը կաթողիկոսանում է, տալիս է իր հիմնարկութեան ժողովրդական հոգաբարձութիւն—իսկոյն գրութիւնը փոխվում է: Զարոցը վատաւում է հասարակութեան համակարգը, դառնում է ամենքի սիրելին, և առատ նուիրաբերութիւնները գալիս են նիւթական ապահովութիւնը հաստատելու—մի բան, առանց որի չէ կարող գոյութիւն ունենալ բարեկարգ հիմնարկութիւն:

IV
Այսօր Կարբեցու ժամանակի կարգերն են հաստատվում մեր եկեղեցական—զարոցական գործերի մէջ: Եւ այսօր, երբ կատարվում է Ներսէսի համաբաւոր հիմնարկութեան 75-ամեակի գոյութեան յօդուածը, մենք, իբրև այդ զարոցի անկեղծ բարեկամներ, չենք կարող նախ չը դիմել մեր հոգեւոր կառավարութեան և չը ցանկալ, որ նա չը մոռանայ թէ ինչն էր Ներսէսի, Մատթէոսի և Գէորգի ամենամեծ ծառայութիւնը: Այսօրվայ օրը մեր ինակ ժողովրդական, ինքնաւար կրթական հիմնարկութիւնը Ներսիսեան զարոցն է: Մենք հաստատում ենք, որ մնալով այդպէս, զարոցը կը շարունակէ մեծ բարիքներ մատակարարել մեր ժողովրդին, տալով նրան հնար եղածին չափ կրթված անդամներ և քահանայներ:

Եւ սկզբը ամբողջ օրտից ցանկանում ենք, որ կովկասեան հայերի անդամների զարոցը միշտ բարգաւաճէ, առաջ գնայ և և հարաւորութիւն ունենայ պարծանքով սօսելու շատ այսպիսի յօդուածներ...

Առաջադիմութիւն առողջ, հիւթալից կըրթութեամբ:

* Համառօտ պատմութիւն Ներսիսեան հոգեւոր զարոցի, կազմեց Սա. Մակրասեանը: Պարիզ 1897 թ. լուս տեսաւ և նրա մասին մենք կը խօսենք մի այլ անգամ:

ու ձախ կողմում, Մարսեան դաշտերի վրա երկու գծով շարված օտար ազգերի պալլիստիոնները ցուցանանքէսի ամենահետադրեալ քաղաքային շինարարական արտադրանքներն են: Վերջապէս մի առանձին շինարարական կազմում Տրոպոլիսի շուրջը գրեթէ անվոյժ շինութիւնները Լ'Գրանտուր շրջափակին դուրս կան ցուցանանքէսի մի քանի անջատ մասեր՝ Բնչուէն Մեծ անիւղ (La grand roue), մասեր՝ Բնչուէն Մեծ անիւղ (La grand roue), Վենետիկ շրջափակին գիւղը (village suisse), Վենետիկ շրջափակին (Venise à Paris) եւ Երկազուկը (Le globe celeste): Այս մասերը միացած են ամբողջի հետ ժամանակաւոր կամուրջներով (passerelle), որոնցից մէկը սրանից մի քանի օր առաջ փոշի եկաւ, պատճառովով տասնեակ զոհեր: Երթեւեկութիւններին աւելի դիրքութիւն տալու համար, Սենայի այն կամուրջները, որոնք ցուցանանքէսի շրջափակի մէջ են գտնվում, երկու կողմից լայնացրած են ժամանակաւոր յաւելումներով: Այս բոլորը սակայն անբաւական կը լինէր հարկեր հարկաւոր սոցիալական համար անցուցորդի շրջանը մի նոր կամուրջով, որի հիմքը ձգուած թագաւոր Կայսրի այցելութեան ժամանակ եւ կոչվում է՝ Ալէքսանդր III-ի կամուրջը: Այս կամուրջը մի ճարտարապետական հրաշալիք է. նա ամբողջապէս հաստատված է մի հատ երկաթէ կամարի վրա, որ անցնում է մի ափից միւս ափը եւ ունի 107 1/2 մետր երկարութիւն. բարձրութիւնն է ջրի մակերեսէն 3,08 մետր: Կամուրջի իւրաքանչիւր ծայրում երկու երկու հրաշալիք տեսներ կան, որոնց ստորոտում բարձրանում են մի մի արձաններ, ներկայացնելով Ֆրանսիան իր պատմութեան զանազան շրջաններում: Ֆրանսիան միջին դարում եւ ժամանակակից Ֆրանսիան մի կողմում, Ֆրանսիան վերածնութեան դարում եւ Լուիսօվիլոս XIV-ի ժամանակ միւս կողմում Մի եւ նոյն սրահերի կատարին ոսկեզօծ բրոնզից շինված են արձանների շարքը: Արձանները, որոնք ներկայացնում են Պեղարք եւ այն պէտքերի անտուճութիւնը, որ հին աշխարհում սատուածների ոճերը ճանաչելու պատճառով: Կամուրջի երկու մուտքերի առջև երկու զոյգ առեւձներ կան, որոնց առաջնորդում են մանուկները: Կամուրջի պատկերը գեղեցիկ է եւ վեհ մի եւ նոյն ժամանակ. գեղեցիկ կապուտակի պիլոնների սրբաշունչ կարգով կանգնած է հակադաս կամարը եւ առեւձները: Նոյն ժամանակ եւ նրա լայնութիւնը եւ ոյժը:

